14569 14574
14570 14575
14571
14572
14573

891.99
Z-38

2002

Хрп. 117

ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԻԳՐԱՆԱՅ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆՑ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

ԵՐԵՒԱՆ

ՏՊԱՐԱՆ ԷՄԻՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

1883

4691

Дозволено Цензурою г. Тифлисъ 7 Января 1883 года.

Типогр. Эм. Теръ-Григорянцъ. гор. Эривань

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

—

1. Էն ի՞նչն ա ինչ.— (1)
Հէրը գնաց հըռըռալէն,
Քարվան գնաց ճըռըռալէն.
Հէր՝ դու կա՛ց, քարվան՝ դու եկ դա՛ռ։

—

2. Փէտը փէտին աղպէր,
Ջուրը ջրին՝ հօրողպէր.
Աւազ սարկաւագ՝
Չի՛ մինի քաղաք։

—

3. Սև սալայ՝ սիպտակ սալայ,
Խաթուն միջին կ'ծլվլայ։

—

4. Ակ տամ, լօկ տամ.
Քաքուլիցը բռնեմ՝ ձիգ տամ։

—

(1) Ծանօթ. Առհասարակ ամեն հանելուկ ասելիս, այսպէս են սկսում. —Էն ինչն ա ինչ.... եայլն:– Մենք աւելորդ համարեցինք իւրաքանչիւր հանելուկի սկզբում այդ՝ ձևը գործ դնել, որպէս զի ձանձրութիւն չպատճառենք ընթերցողներին։

5\. Սև ա՝ սաթի նման,
Սիպտակ ա՝ կաթի նման,
Ման ա գալը մարդի նման։

—

6\. Իմ պապը սարին ա,
Կուտլիկը կատարին ա.
Գաւազանը ետևին ա,
Ձուաերը փորին ա։

—

7\. Կօլօլ մանղէն,
Սիպտակ լանղէն։

—

8\. Ինքը կեռ, հագին կնկեռ.
Հէնց կէթայ, ո՛նց որ մըկըծեռ։

—

9\. Թագաւոր կայ հնոց,
Գլխին կայ աղոց.
Աշակերտներին կ'ասի. „Քրիստոս յարե՛աւ ի մեռելոց։"

—

10\. Տանը հինգ տարի թագաւոր էլաւ,
Տանը վեցին հիւանդացաւ.
Երեսունին մեռաւ պրծաւ,
Համայ էլ ետ սաղացաւ։

—

11\. Սիպտակ դաշտիկ,
Սև սև հնդիկ,

Ձեռով ցանեմ, լեզուով հնձեմ։

—

12\. Օրան օրան շուռ ա գալի.
Ոններ չունի՜ ման ա գալի,
Բերան չունի՝ կուլ ա տալի։

—

13\. Տափակը տափակին դնեմ,
Բուռը բուռը նի ածեմ,
Խոխոալէնը վեր ածեմ։

—

14\. Երկու աղըղ ասայ ասայ,
Կէթան, կգան բասայ բասայ։

—

15\. Ա՜յ տէրտէր, ջա՛ն տէրտէր. չես ուտում, չես խմում՝ փորդ քա՞նի գագւայ, տէրտէր։

—

16\. Ունունիկ՝ բունունիկ, մէջը ծակ.
Թէ խելք ունես, կ'ասես՝ գտակ։

—

17\. Ձին ձորումը, պոչը երկինքումը։

—

18\. Լուն՝ թռաւ՝ լեռ գցեց։

—

19\. Չորս աղպէր մի գտակով են ապրում։

—

20\. Էն ի՞նչն ա ինչ, որ մեռելը սաղին շալակում ա։

21. Քանի սաղ էր՝ խոտ ու դարման էր ու-տում. որ մեռաւ՝ միս ու ա-րին կերաւ։

—

22. Էն... երկրիցը իրեք բուռ փող պակսեց։

—

23. Հաջի պապ, ոսկէ գլուխ։

—

24. Մի ծառ կայ՝ 12 ճուղք ունի. ամեն ճղքանը՝ 30 տերև։

—

25. Էն ի՞նչ գաւազան էր, որ միս ու ա-րին ունէր։

—

26. Ալափստրան՝ քարի վաստակ.
Քա՞նի վազես փորդ դարտակ։

—

27. Իրիկունը ցան փռեմ, առաւօտը տես-նամ չկայ։

—

28. Էն... որ ամեն բանի պէտքն ա։
29. Էն... քեզ դրի՝ կպաւ։

—

30. Մի տուն ունենք, պատերն էրծաթ, մէջը ոսկի։

—

31. Մի սար կայ. քամակը ձին ա գալի, աղաքը՝ կարկուտ։

32. Գեննի տակին բուրդ պլոճիկ,
Ո՛վ գտնի՝ իրան ռոճիկ։

—

33. Էն... մանէ շամփուր, էրկաթէ խորոված։

—

34. Ձին գնաց, թամքը մնաց։

—

35. Երկէն աղեք, ծէրը ծաղիկ։

—

36. Բռնեմ՝ բռնովս մին ա.
Թողամ՝ տանովս մին ա։

—

37. Ալ եղը, չալ եղը,
Կաննած, չխփարած եղը։

—

38. Էս դիհը դար, էն դիհը դար՝ մէջն անդադար։

—

39. Ըստէ պուպուզ, ընդէ պուպուզ՝ երդ-կովը դուս։

—

40. Ուլուլիկ, պուլուլիկ.
Մէջը լիքը սուլուլիկ։

—

41. Հաւքը էկաւ երկնքից. ոսկէ լական իր կտուց. „ղու“ արեց, „բու“ արեց՝ իրեք բան աղաք գցեց։

42. Թուրքի տղէն վազէ վազ, գօտիկ
ունէր քառասուն գազ։

—

43. Սարից, քարից գցեմ՝ չէ՛ կոտրուի.
որ ջուրը գցեմ՝ կկոտրուի։

—

44. Յերէկը նորահարս, գշերը զարա-
ւաշ։

—

45. Ղօլթուղս առնեմ՝ լաց կընի. դնեմ
գետինը՝ ձէնը կկորի։

—

46. Երկէն քուչայ, մէջը փուչ ա։
47. Փետէ նաշ, էրկաթէ մեռելը։

—

48. Հանդը սիպտակ, սերմը սև՝ ցանողը
գիտայ։

—

49. Անթև թռնում ա, անոտ՝ վազում ա։

—

50. Ա՜յ օրթան, օրթան,
Տասն էրկու չչորթան,
Իրար ետևից կէթան։

—

51. Սև սատանայ՝ բանձր տան ա.
Թէ իմանաս՝ խելքի բան ա։

—

52. Ալ եզը, չալ եզը.
Քանի բարձեմ՝ տա՛ր եզը։

—

53. Էն .... մի բակում հինգ աղջէր
բանում են։

—

54. Մի կով ունենք հանդին ա.
Պօզերը կրմանդին ա
Տարէնը մի հետ կիթ կտայ.
Ըն էլ հանդին ա։

—

55. Ուլանոց, ուլպտանոց
Ուլանն էկան՝ զընգզընգանոց։

—

56. Կօլոլ եկեղեցի, դանկով տուի դուռը
բաց տրի։

—

57. Էն ..... ասում եմ „տրի՛, տրի՛„ չէ
գալի. որ ասում եմ „մի՛ գայ,
մի՛ գայ„ գալիս ա։

—

58. Ինքը սատումը,
Ոտները կրակումը։

—

59. Էն....մի տօլաբ՝ լիքը խուշտուր։

—

60. Մի տնանի, էրկու տնանի։

61. Մի սարի դօշում երկու հաց կայ փռած։

—

62. Գեննի տակին մեծ շամփուր։

—

63. Երկէն երէց, կարճ դաւազան։

—

64. Ալալայ, պալալայ՝ բե՛ր հաղ արա՛ տա՛ր կախ արա։

—

65. Ասլանը չօքեց, արաբը նստեց։

—

66. Սև ուլէքը սարն ելաւ,
Անհամբարքը վեր եկաւ։

—

67. Տասը եզ ունեմ, տասի ճակատն էլ ղաշխայ ա։

—

68. Մի աման ունեմ, որ դպա երկինքն եմ բռնում՝ դատարկվում ա. որ դպա գետինն եմ բռնում՝ լցվում ա։

—

69. Էն .... լարը քաշեմ՝ սարը գայ։

—

70. Էսան էսան՝ փոփոխան.
Ջրէն սնցան՝ չոխսան։

71. Սև սատանէն պատերը կախ։

—

72. Դեղին տիկին, գեննի տակին։

—

73. Հանդստան, Ֆրանգստան.
Ձագերը թռան, մամերը նստան,
Մամերը թռան, ձագերը նստան։

—

74. Տափ տփի, ընկնի խփի։

—

75. Աշի աշի, գոմշի կաշի,
Ոչ կհալի, ոչ կմաշի։

—

76. Իլեկ իլեկ իշկման,
Նա՛շխուն կաքաւ Թուրքման,
Նա իման՝ ա, նա՛ մուսուլման։

—

77. Ուն ունի, բուն ունի,
Հաւի պէս գլուխ ունի։

—

78. Ջրէ դուռ, փետէ բալանք։

—

79. Խիցէր (աքաղաղ), խիցէր, տանսի խիցէր,
Ինքը կեռ, հագին պխպեռ։

—

80. Տիղը տղէցն ա կպէ, տիղն էլ պատիցը.
գնացէ՛ք տղամօրը կանչէք՝ տիղը տը-
ղէցը պոկի, տիղն էլ պատիցը։

—

81. Էն ի՞նչ թէ ինչ՝ լըպստացնեմ, ծա-
կիցն անցկացնեմ։

—

82. Երկէնչուան, թէխ (դէպի) Նախջուան։

—

83. Սարից գցեմ, սար չի,
Քարից գցեմ, քար չի,
Կ'կրկրայ՝ կաքաւ չի.
Ջու կածի՝ հաւ չի։

—

84. Էն... մի մարաք, մէջը լէքը ուրագ։

—

85. Մէնք մինն ունենք մի ոննանի,
Որ դուս գայ՝ դէլը կտանի։

—

86. Սարից գալիս ա հիլ ու միլ,
Մէջքը կտրած, կռները թիլ,
Բերանը գնեմ մի հում ճիլ։

—

87. Մէր տանը կայ ընկլէ ընկլէ,
Կտուշները փնկլէ փնկլէ.
Մարդ չի կարայ դէմը կաննի։

—

88. Էն... հողէ լուլայ, մաէ գիւլլայ։

—

89. Էն... մաէ կճուճ, էրկաթէ խուփ։

—

90. Էն ի՞նչ կենդանի ա, որ Աստոծ չի
ստեղծէ։

—

91. Էն ո՞ր վարդապետն ա, որ ծունկը
գլխիցը բանձր ա։

—

92. Էն ի՞նչ շոր էր, որ ո՛նչ կտոր ունէր,
ո՛նչ կար։

—

93. Փէտի կտոր տեսայ անտաշ,
Վրէն կարմիր շապիկ քաշած.
Փորի մէջը ալիր լցրած,
Ինքը պտուղ փշէ քաղած։

—

94. Տաս վըր չորսին.
Չորս վըր ծովուն.
Ծով վըր ծնկան.
Ծունկ կրնկան.
Ո՞վ ա նստէ վըր քո կնկան։

—

95. Երկինքն ամպ ա, երկիրը հով,
Եզը ծնեց՝ բերեց կով։

—

96. Երկինքը ծակ, երկիրն էլ ծակ,
Մէջը լիքը ջուր ու կրակ։

—

97. Էն... անջուր ջաղաց, անկրակ բաղաջ։

—

98. Եբ սոված եմ՝ հաց տո՛ւ ինձ, որ
քեզ սոված չթողամ. եբ ծա-
րաւ եմ, ջուր տո՛ւ ինձ որ քեզ
պէտք գամ։

—

99. Էն.... ըստիան դպա քեզ գցեմ։

—

100. Սերմեմ աճար, դուս գայ բանջար՝
քաղեմ կճուճ։

—

101. Ջրից ղՓիլ, փետից բալանիք։

—

102. Սև եզը ջուլեմ, ջուլն ուտեմ։

—

103. Էն.... մի պարկհան՝ շեղջով լիքը։

—

104. Էն ի՞նչն ա ինչ մի գեօլ,
Գեօլի քնթին մի աղեք,
Աղքի քնթին մի ծաղեկ։

—

105. Էն...իմն ա պռտի ճնի. չի ճնի՝ կըռ-
ծի ճնի։

106. Ջուրն ի դուս քարվան,
Ջուրն ի վեր քարվան,
Ոչ խոտ կուտի՝ ոչ դարման։

—

107. Մօրից ծնուեցի՝ չորս գեղ կերայ.
Եբ որ մենծացայ՝ գետին փորեցի.
Եբ որ մեռայ՝ աշխար ման եկայ։

—

108. Էն...աշխարի ստեղծուելուց ընչանք
հմի՝ մի հետ ա արև տեհէ։

—

109. Էն... մեծ աղլուխ՝ մով լիքը։

—

110. Գոմշի կաշին ծալուիլ չի՝ խուր-
դայ փողը համբարուիլ չի։

—

111. Երկու արջ մի ձորում կռվում են։

—

112. Սիպտակ մէր, սև սև ճուտեր։

—

113. Մի խորոմ խոտ, կողքը ցխոտ։

—

114. Մի թաւում մի կտոր դմակ կայ.
Թաւէն մաշվում ա, դմակի ըսկի
ա՜նուճն էլ չի։

—

115. Ես ու ճիճղին գնացինք սարը. որ

Ճիճղին չըլնէր՝ ես կճմայի մալումը։

—

116. Էն... ո՞ր դիհը գցիմ՝ կէլթայ։

—

117. Շունը հաչաց, դունչը ուռեց։

—

118. Իմ հէրը ջրի վրէն կարմունջ էր շի-
նում. ո՛նչ ուրաք էր բանաց-
նում, ո՛նչ սղոց, ո՛նչ բուրղու.
մի խօսքով ըսկի ձեռ չէր տալի՝
ինքն իրան կարմունջը շինվում էր։

—

119. Բազարում ծախուիլ չի,
Աշխարքում քաշուիլ չի.
Նրանից էլ անուշ բան չկայ։

—

120. Էն... չորս կոխիչ ունի, չորս ձգիչ,
երկու բզիչ՝ մի տըմբտըմբիչ։

—

121. Սև կհինեմ, կանանչ կգործեմ, կար-
միր կկտրեմ։

—

122. Անասեղ շապիկ, անջաղաց ալիր, ան-
չաքուճ մեխ։

—

123. Էն... ինքը ոսկոր չունի, համայ ոս-
կոր ա ուտում։

124. Աստոծ ինձ մի ուլ տուեց,
Ուլ չտուեց՝ բլբուլ տուեց,
Աստու հրամանով՝ աքլորը իշին կուլ
տուեց։

—

125. Էն... Սաղից մեռել ա ըլնում, մեռելից
սաղ։

—

126. Էն... դարման ուտում ա, մոխիր
թըքում։

—

127. Էն... ինքը էծ՝ մէջքը պէծ։

—

128. Պուճուր երկինք, տակին ձին ա գալի։

—

129. Էն, ո՞վ էր, որ եբ տարան թաղելու
Փողն ասեց — ես կուս եմ։

—

130. Էն ո՞վ էր, որ արքայութինը ամեն-
քից աղաք մտաւ։

—

131. Էն... որ ո՛նչ խուփ ունի, ո՛նչ էլ տին։

—

132. Վեր եմ ունում՝ քա՛ր չի.
Ձու ա ածում՝ հա՛ւ չի։

—

133. Էն ո՞վ էր, որ մէկին սըպանեց՝

ինքը գնաց արքայութիւն. համայ
ում սրպանեց՝ նա դժողքը գնաց։

—

134. Ո՛նչ ձեռ ունի, ո՛նչ ոտ, համայ վի-
րև ա բանձրանում։

—

135. Էն...էգը որձից ծնուեց։

—

136. Էն...հէրը ծուռը, մէրը դուղ, քիրը
խելօք, աղպէրը գիժ։

—

137. Մի աղլուխ ունեմ, ուզում եմ չորա-
ցնի՝ չեմ կարում։

—

138. Էն...քանի սաղ էր՝ խոտ ու դարման
էր ուտում, որ մեռաւ՝ գինի էր խմում։

—

139. Էն...փորի դհիցը ուտում ա, մէջ-
քիցը դուս ածում։

—

140. Մի հաւանոց ունեմ, մէջը էրկու
թուխս կայ՝ իրանց ճուտերովը։

—

141. Կօլորակ, դեղին՝ աշխարքին սիրելի։

—

142. Գցողը տղամարդ չի. գցածը քար չի,
սրպանածը թևեր ունի՝ ղուշ չի։

—

143. Էն ի՞նչ թուղթ ա, որ վրէն գրիչ չի
բռնի, էն ի՞նչ գրիչ ա, որ նրա վրա
կգրի։

—

144. Փտած փէտը փորեցին,
Ասլանը մէջը պահեցին։

—

145. Էրկուսը մէկին, իրեքն էրկսին,
Իրար հետ խառնեցին՝ բաժանել
չկարացին։

—

146. Բռնեմ ափովս,
Շաղ տամ թաթովս,
Մեռնի տարով,
Ապրի բարով։

—

147. Զորս աղպէր մի գտակի տակ,
Ես ասեմ թէ էլի չգտաք։

—

148. Տապանը փետէ,
Մեռելն էրկաթէ.
Եր որ ձէն կտայ,
Աշխար կթնդայ։

—

149. Էն...առաւօտը չորս ոտի վրա ա ման
գալի. ճաշին՝ էրկու, իրիկունը՝ իրեք։

—

150. Քարէ քուլխտիկ,
Տոճ կան հորտիկ։

—

151. Մինը կաննած խօսում ա. երկուսը անկաջ են դնում, երկուսն էլ մտիկ են տալի։

—

152. Պապէն էկաւ վազէ վազ,
Լիզուն գցեց քառսուն գազ։

—

153. Ինքը սունի, ոտներ կունի,
Քանց սատանէն շատ կթունի։

—

154. Խստուց չուր վան, վազն Երեւան,
Ոսկի չադիր, մէջն ա դիւան։

—

155. Պապէն նստաւ վըր գարին,
Քառսուն աբէն վըր թեւին,
Կ՛ըսայ-հա՛ կմրսեմ, հա՛ կմրսեմ։

—

156. Մանդր, մանդր քերեկան,
Արեւի ետեւից երեւան։

—

157. Քըստղա՛ն, քըստղա՛ն,
Խուռվլի՝ նստի դան։

—

158. Կուզ կգաւ, արար հեծաւ։

—

159. Էն... կէթայ կգայ՝ քու մօր փորին բարով կտայ։

—

160. Հազար բռուկ,
Սարէն կպուկ։

—

161. Թէ թափես՝ շատ կհաւաքես, թէ պահես՝ ինձանից էլ կզրկուես։

—

162. Ջալ հաւը ծկռտաց՝ ձուն շպրտեց։

—

163 Ետեւից հուփ տամ, աղաքից որոճայ։

—

164. Ո՛նչ կհաջայ, ոնչ ման կգայ, համայ մարդի կկծի։

—

165. Երկէն կարպետ՝ ծալուիլ չի. վըրէն մանդր քարեր՝ համբարուիլ չի։

—

166. Հէրն ասեց-վ՛այ ուսս. մէրն ասեց-վ՛այ մէջքս. երեխէքն ասեցին-սո՛ւս կացեք, որ վէ կընկնենք։

—

167. Էն...կարճ տէրտէր՝ երկէն փիլոն։

—

168. Երեսը տախտակ, տակը քար,
Ութ ոտնանի, երկու սար։

—

169. Շաքին շալակ,
Անձրևին խայտառակ,
Ոչի բուն, լուի քաղաք։

Ծանօթ. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳՐՔԻ ՎԵՐՋՈՒՄ։

14569 - 14575

20,13